ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ե՞րբ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը։

1) Ք. ա. մոտ 180 թ.
2) Ք. ա. մոտ 170 թ.
3) Ք. ա. մոտ 185 թ.
4) Ք. ա. մոտ 175 թ.

2 Ե՞րբ է կառուցվել Ս. Հռիփսիմե եկեղեցին։

1) 613 թ.
2) 631 թ.
3) 618 թ.
4) 617 թ.

3 Անգլիացիները հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին Ղարաբաղի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ–նահանգապետ նշանակեցին՝

1) 1919 թ. հունվարին
2) 1919 թ. հունիսին
3) 1918 թ. հուլիսին
4) 1920 թ. հունիսին

4 Ե՞րբ են Էմինը և Հերակլ II–ը խրախուսական նամակներ ուղարկել Հովնանին։

1) 1766 թ.
2) 1763 թ.
3) 1762 թ.
4) 1764 թ.

5 Ե՞րբ է Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել արևմտահայերի ազգային կանոնադրությունը։

1) 1860 թ. մայիսի 24–ին
2) 1863 թ. մարտի 17-ին
3) 1859 թ. մայիսի 24–ին
4) 1860 թ. մարտի 17–ին

6 ՀՀ խորհրդարանական ո՞ր ընտրություններում է հաղթել «Միասնություն» դաշինքը։

1) 2003 թ. մայիսի 25–ի
2) 1999 թ. մայիսի 30–ի
3) 2007 թ. մայիսի 12–ի
4) 1995 թ. հուլիսի 5–ի

7 **Ե՞րբ է արգելվել հայկական մեհենագրության գործածությունը։**

1) V դարում
2) IV դարում
3) II դարում
4) III դարում

8 **Ե՞րբ է Կիլիկիայի հայոց գահը անցել Հեթումյանների ազգակից Նղրեցիներին։**

1) 1344 թ.
2) 1345 թ.
3) 1362 թ.
4) 1342 թ.

9 **Որքա՞ն էր Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական կռվող ուժի թիվը 1917 թ. ապրիլի դրությամբ։**

1) 185 000
2) 182 000
3) 158 000
4) 232 000

10 **Ալեքսանդր Բեկզադյանը ի՞նչ էր առաջարկել անդրկովկասյան հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովի 1921 թ. հունիսի 25–27–ի նիստում։**

1) ՀՍԽՀ–ին միացնել Լեռնային Ղարաբաղը, Լոռին և Ախալքալաքի գավառը
2) Խորհրդային Հայաստանին միացնել Զանգեզուրը, Նախիջևանը և Ջավախքը
3) ՀՍԽՀ-ին միացնել Լոռին, Զանգեզուրը և Ախալցխայի գավառը
4) ՀՍԽՀ-ին միացնել Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Ախալքալաքի գավառը

11 **Ո՞վ է Հայաստանից մասնակցել Նիկեայի առաջին տիեզերական ժողովին։**

1) Վրթանես Ա-ն
2) Արիստակեսը
3) Գրիգորիսը
4) Գրիգոր Լուսավորիչը

12 **Ո՞վ էր ղեկավարում Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանության համար ստեղծված զինվորական մարմինը։**

1) Արմենակ Եկարյանը
2) Հակոբ Կոտոյանը
3) Հայկակ Կոսոյանը
4) Արամ Մանուկյանը

13 **Ըստ իր զորքի քանակի՝ թվարկված նախարարական տներից ո՞րը չէր մտնում հազարավորների և բյուրավորների մեջ:**

1) Կադմեա
2) Բզնունի
3) Բագրատունի
4) Սոդացի

14 **Որքա՞ն հայ բնակչություն կար Կիլիկիայում 1920 թ. սկզբներին:**

1) 130 հազար
2) 100 հազար
3) 150 հազար
4) 110 հազար

15 **Ըստ Պատմահոր գրածի՝ ո՞ւմ էր վստահել Արտաշես Բարեպաշտը հայոց զորքի հյուսիսային մասը:**

1) Զարեհին
2) Տիրանին
3) Արտավազդին
4) Սմբատին

16 **Ո՞վ էր գլխավորում 1992 թ. փետրվարին Խոջալուն գրաված հայկական ջոկատները:**

1) Մոնթե Մելքոնյանը
2) Աշոտ Ղուլյանը
3) Սեյրան Օհանյանը
4) Արկադի Տեր–Թադևոսյանը

17 **Ո՞ր իրադարձության կապակցությամբ է հրապարակվել հետևյալ կոչը:**

«Ցո՛ւյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

1) Սարդարապատի ճակատամարտի
2) Վանի 1915 թ. ինքնապաշտպանության
3) Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման
4) Զեյթունի 1962 թ. ապստամբության

18 **Ո՞ւմ մասին է խոսքը մեջբերված հատվածում:**

«… [Նա] Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը»:

1) Գլինկայի
2) Նիկոլսկու
3) Բրոսեի
4) Ադոնցի

19 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր ճիշտ բացատրությունները ներկայացնող տարբերակը՝**

ա. Ստեփան Զորյանի ղեկավարած մարմինը հայտնի էր «Ինքնապաշտպանության կարգադրիչ բյուրո» անունով:

բ. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ունեցող երիտթուրքերի կազմակերպությունը կոչվում էր «Միություն և արդարություն»:

գ. Բրեստ–Լիտովսկի բանակցություններում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը հայտնի է «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների» անունով:

դ. Առաջին աշխարհամարտի ժամանակ քեմալականների կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունը մարդկությանը հայտնի է «Մեծ եղեռն» անունով:

ե. Արևմտահայերի ազգային խորհրդի որոշումով կազմակերպվող զորամիավորը կոչվում էր նաև երկրապահ դիվիզիա:

1) ա, գ
2) բ, ե
3) գ, ե
4) բ, դ

20 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր սխալ բացատրությունները ներկայացնող տարբերակը՝**

ա. Հունական ավանդության համաձայն՝ Հայաստանի Արմենիա անվանումն առաջացել է արգոնավորդ Յասոնի անունից:

բ. Ուրարտուն Արարատ անվան ասորեստանյան տարբերակն է:

գ. Թեգարամա երկիրն այդպես է կոչվել Արամ նահապետի հոր՝ Թորգոմի անունից:

դ. Հայասա՝ խեթերեն նշանակում է մեծ երկիր:

ե. Հայաստանում I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելլենիզմ» անունով:

զ. Տուշպա անունը համարժեք է արդի հայերենի Տոսպ անվանը:

1) ա, գ, դ
2) բ, գ, դ
3) ա, ե, զ
4) բ, դ, ե

21 **Թվարկվածներից որո՞նք են Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված հայերի զանգվածային հայրենադարձության պատճառներից:**

ա. ԽՍՀՄ հեղինակության աճը
բ. սառը պատերազմի իրողությունը
գ. հայկական գաղթօջախներում Հայ դատի համար պայքարի պայմանների բացակայությունը
դ. ԽՍՀՄ ղեկավարության հայանպաստ դիրքորոշումը
ե. Թուրքիայի անդամակցելը ՆԱՏՕ–ին

1) ա, դ
2) բ, ե
3) ա, գ
4) բ, դ

22 **Թվարկվածներից որո՞նք են Կիլիկիայի հայերի և մոնղոլների միջև դաշինքի կնքման իրական պատճառ հանդիսացել:**

ա. Հայերը ցանկանում էին ստեղծել հայ-մոնղոլական դաշինք ընդդեմ խաչակիրների:
բ. Մոնղոլները խոստացան հայերին վերադարձնել մահմեդականների խլած տարածքները և օգնություն ցույց տալ Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
գ. Հեթանոս մոնղոլները ձգտում էին շահելու քրիստոնյա հայերի համակրանքը, որովհետև թշնամաբար էին տրամադրված մահմեդականների նկատմամբ:
դ. Մոնղոլները խոստանում էին պահպանել Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
ե. Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին, որպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:

1) բ, գ
2) դ, ե
3) բ, ե
4) ա, դ

23 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա. Լվովում տպարանի հիմնումը Հովհաննես Քարմատանենցի կողմից
բ. «Ուրբաթագրքի» լույսընծայումը Հակոբ Մեղապարտի կողմից
գ. Սեֆյան պետության հիմնադրումը
դ. Կ. Պոլսի գրավումը օսմանյան թուրքերի կողմից
ե. Աբգար Թոխաթեցու կողմից մի շարք գրքերի հրատարակումը Կ. Պոլսում
զ. Չալդրանի ճակատամարտը

1) ա
2) ե
3) զ
4) գ

24 **Հայ ազատագրական պայքարի իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Զեյթունի ապստամբների՝ «Զեյթունի անկախ իշխանություն» վերտառությամբ կարմիր դրոշ բարձրացնելը թուրքական զորանոցի վրա
բ. Բաբը Ալիի ցույցը
գ. Զեքի փաշայի գլխավորած զորքի շարժվելը դեպի Սասուն
դ. Շենիկի գյուղապետ Գրգոյի տանը ինքնապաշտպանական ժողովի գումարումը
ե. Կարապետ Բասիլոսյանի կոչը Զեյթունի լեռնականներին

1) ա
2) գ
3) ե
4) բ

25 **Առաջին աշխարհամարտի տարիներին ձևավորված հայ կամավորական ջոկատների հիմնադրման վայրերը համապատասխանեցրե՛ք ջոկատներին և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

1. I ջոկատ
2. II ջոկատ
3. III ջոկատ
4. IV ջոկատ

ա. Կաղզվան
բ. Սարիղամիշ
գ. Վան
դ. Իգդիր
ե. Սալմաստ

1) 1–ա, 2–ե, 3–դ, 4–բ
2) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ
3) 1–բ, 2–դ, 3–ա, 4–ե
4) 1–ե, 2–բ, 3–ա, 4–գ

26 **Կատարե՛ք համապատասխանեցում և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

Անուն

1. Խ. Մուղդուսի
2. Լ. Բերիա
3. Ն. Ստեփանյան
4. Ն. Այվազով
5. Գ. Հարությունյան

Պաշտոն

ա. ՀՍԽՀ Չեկայի նախագահ
բ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
գ. Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ
դ. Խորհրդային Հայաստանի մարքսիզմ–լենինիզմի ինստիտուտի տնօրեն
ե. Անդրկովկասի կուսակցական երկրային կոմիտեի առաջին քարտուղար
զ. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմ

1) 1–ա, 2–ե, 3–գ, 4–բ, 5–զ
2) 1–դ, 2–ա, 3–գ, 4–ե, 5–բ
3) 1–գ, 2–բ, 3–դ, 4–ա, 5–զ
4) 1–գ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–բ

27 **Ըստ Տասի խորհրդին ներկայացված հայկական համատեղ հուշագրի՝ ո՞ր տարածքներն էին ներառվելու Միացյալ հայկական անկախ պետության կազմի մեջ։**

1) Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով, Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները, Կիլիկիայի 4 սանջակները
2) Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 5 սանջակները, Ղարաբաղն ու Զանգեզուրը
3) Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները, Կիլիկիայի 5 սանջակները, Հայաստանի Հանրապետությունը՝ առանց Ղարաբաղի
4) Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով, Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 4 սանջակները

28 **Հ. Վեստենենկը և Ն. Հոֆը ե՞րբ են ընտրվել Արևմտյան Հայաստանի տեսուչներ։**

1) 1914 թ. մայիսին
2) 1913 թ. դեկտեմբերին
3) 1914 թ. հունիսին
4) 1914 թ. ապրիլին

29 **Անգլիացի գեներալ Դևին և Դրոն ե՞րբ են ստորագրել Շարուր–Նախիջևանը Հայաստանի Հանրապետությանը թողնելու մասին հրամանը։**

1) 1920 թ. ապրիլին
2) 1919 թ. մայիսին
3) 1919 թ. ապրիլին
4) 1919 թ. փետրվարին

30 **Ո՞վ էր հայոց իշխանն ու սպարապետը 748–750 թթ. ապստամբության սկզբին:**

1) Աշոտ Բագրատունին
2) Գրիգոր Մամիկոնյանը
3) Սմբատ Բագրատունին
4) Մուշեղ Մամիկոնյանը

31 **Ինչպե՞ս է կոչվել Տայք նահանգը Հայաստանի 591 թ. բաժանումից հետո:**

1) Մեծ Հայք
2) Խորագոյն Հայք
3) Մասն Մեծ Հայոց
4) Ներքսագոյն Հայք

32 **Ո՞ւմ խոսքերն են:**

«Գրիգոր Լուսավորիչը «տղայության հասակում» Հայաստանում սովորել է հայոց գիրն ու լեզուն»:

1) Մար Աբաս Կատինայի
2) Ագաթանգեղոսի
3) Բարդածանի
4) Գևորգ Ասորու

33 **Ո՞ւմ պատվին է ասվել հետևյալ խոսքը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:**

«Մեր հոգիները ցավում են ամեն մի անմահացման դեպքում, բայց մեր սրտերը գոտեպնդվում են մեր հերոսների վարքով, մեզ հաղորդում վճռականություն ու հաստատականություն»:

1) Սասուն Մկրտչյանի
2) Ռոբերտ Աբաջյանի
3) Արմենակ Ուրֆանյանի
4) Մոնթե Մելքոնյանի

34 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը:**

«Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»:

1) Իվան Իսակովը
2) Իոսիֆ Ստալինը
3) Նիկիտա Խրուշչովը
4) Նիկոլայ Տիխոնովը

35 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1. Հայաստանում 1925 թ. շրջանառության մեջ մտած գյուղատնտեսական ապրանքների հարկման ձևը հայտնի է գյուղմիասիարկ անունով։
2. ԽՍՀՄ–ում 1920-ական թթ. սկզբներին առաջնահերթ կարգով թեթև և սննդի արդյունաբերության ստեղծման քաղաքականությունը կոչվում էր արդյունաբերացում։
3. 1930–ական թթ. կեսերին ԽՍՀՄ–ում հաստատված համակարգը հայտնի է ամբողջատիրական անունով։
4. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»։
5. ԽՍՀՄ–ում 1920–ական թթ. վերջերից իրականացվող քաղաքական կուրսը կոչվում էր նոր տնտեսական քաղաքականություն։
6. Երևանում 1923 թ. նոյեմբերին գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց կուսակցության վերացման մասին հայտարարությամբ, հայտնի է ինքնավերացման համագումար անունով։

36 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները։**

1. Ստորին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան ռուս մեծ գրող Ա. Պուշկինն անվանել է «Արզրումի (Էրզրում) բանալի»։
2. Հայկական մարզի վերացումից հետո Շամախի կենտրոնով ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ։
3. Ռուսաստանի կազմում 1843 թ. հիմնված վարչական մեծ միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն։
4. Հայկական մարզի վերացումից հետո ստեղծված վարչական միավորը, որի կենտրոնը Թիֆլիսն էր, կոչվում էր Վրացա–Իմերեթական նահանգ։
5. Հայ եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և կառավարության փոխհարաբերությունները սահմանող փաստաթուղթը հայտնի է «պոլոժենիե» անունով։

37 **Թվարկվածներից որո՞նք Մանազկերտի ճակատամարտի հետևանքներ չեն։**

1. Հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում։
2. Տաշիր–Զորագետի, Կարսի և Սյունիքի թագավորներն իրենց հպատակությունը հայտնեցին սելջուկներին։
3. Բազմաթիվ գերիների հետ կայսր Դիոգենես IV-ը ևս ընկավ սելջուկների ձեռքը։
4. Բյուզանդացիները չկարողացան կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը և ծանր պարտություն կրեցին։
5. Հայաստանի միայն հարավային ու արևմտյան շրջաններն ընկան թյուրք–սելջուկների տիրապետության տակ։

38 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ չեն։**

1. Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը։
2. Տրդատ I–ի գահակալման ութերորդ տարում՝ 76 թվականին, Մեծ Հայքի թագավորության խաղաղ կյանքն ընդհատվեց ալանների ներխուժման հետևանքով։
3. Տիգրան III–ից հետո, Հռոմի հետ համաձայնեցնելով, գահ բարձրացավ նրա որդի Տիգրան IV–ը, և այդ պատճառով թագավորեց որպես ոչ ինքնիշխան միապետ։
4. Հայոց արքա Վաղարշ II–ի հեռատես և հմուտ քաղաքականության շնորհիվ Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները։
5. Ք.ա. 92 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց։

39 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1. Խորենացին վկայում է, որ հայերը ոչնչացնում են Մենոն զորավարի բանակը, իսկ նրան «խեղդամահ անում», որից հետո Ալեքսանդրը նոր զորք չի ուղարկել Հայաստան։
2. Համահայկական առաջին թագավորության մշակույթն իր բազմաբնույթ ազդեցությունն է տարածել Հայաստանից դուրս՝ հասնելով Հունաստան, Իրան, Կովկաս և այլուր։
3. Սարդուրի I–ի օրոք արհեստավարժ բանակի կազմում առանձնացվեց «արքայական գունդը»՝ հեծյալ զորամիավորներից բաղկացած ընտրյալ ուժը։
4. Համահայկական երկրորդ թագավորության անկումը համապատասխանում է բուն հելլենիզմի ավարտի ժամանակաշրջանին։
5. Շամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը։
6. Հայկական լեռնաշխարհում վաղագույն տիեզերագիտական գիտելիքները հայտնի են դեռևս քարի դարի վերջին փուլում փորագրված ժայռապատկերներից։

40 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1. Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Աղաթոն Հովնաթանյանի հետ։
2. Միհրան Ղասաբյանի ռենտգենաբանությանը նվիրված աշխատություններն այսօր էլ որպես դասագիրք օգտագործվում են ԱՄՆ–ի բժշկական ինստիտուտներում։
3. Համբարձում Լիմոնճյանը 1815 թ. ստեղծել է հայկական նոր ձայնագրություն։
4. Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան բեմադրվել է 1902 թ. Երևանում։
5. Աղաբաբյան դպրոցը հատկապես լայն ճանաչում է ձեռք բերել Սերովբե Վիչենյանի տեսուչ եղած ժամանակ։
6. Տիգրան Չուխաճյանը հայ օպերային արվեստի հիմնադիրն է։

41 **Գտե՛ք այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը:**

1. մոնղոլ պատվիրակների սպանությունը անեցիների կողմից
2. Կարսի և Դվինի գրավումը մոնղոլների կողմից
3. Շամքոր քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
4. Կարինի գրավումը մոնղոլների կողմից
5. Չմանկատուկի ճակատամարտը
6. Տարոնի, Վասպուրականի և Աղձնիքի ենթարկվելը մոնղոլներին

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1. Ադանայում Կիլիկիայի ինքնավարության հռչակումը Ֆրանսիայի հովանու ներքո
2. ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետության փաստացի ճանաչումը
3. քեմալականների անակնկալ ներխուժումը Մարաշ
4. Սան Ռեմոյի կոնֆերանսի ավարտը
5. Անկարայում ֆրանս–թուրքական զինադադարի ստորագրումը

43 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Հեղինակ

Ա. Անտոն Գարագաշյան
Բ. Նիկողայոս Մառ
Գ. Ալեքսանդր Երիցյան
Դ. Հովսեփ Գաթըրճյան
Ե. Առաքել Դավրիժեցի

Աշխատություն

1. «Գիրք պատմութեանց»
2. «Անի»
3. «Տիեզերական պատմություն»
4. «Քննական պատմութիւն հայոց»
5. «Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում»
6. «Պատմութիւն Հայոց»

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Ա. Վահանանց ապստամբության սկզբում Ատրպատական փախած Հայաստանի մարզպանը
Բ. Արշակ II-ին Մաժակ հրավիրած և Օլիմպիայի հետ նրան ամուսնացրած կայսրը
Գ. պարսից արքայի հետ «Ամոթալի» պայմանագիր կնքած կայսրը
Դ. Տիրան թագավորին կուրացրած Ատրպատականի մարզպանը
Ե. Սպարապետ, ում պահանջով Վարազդատ արքան հեռացավ Հայաստանից

1. Հուլիանոս Ուրացող
2. Հովիանոս
3. Վարազ
4. Ատրվշնասպ
5. Մանվել Մամիկոնյան
6. Կոստանդիոս II

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. Ապլղարիպ Արծրունին Լամբրոն բերդը նվիրել էր Հեթում իշխանին, որն ամուսնացած էր նրա քրոջ հետ:
2. Կիլիկիայի տարածքը բաժանված է երեք մասի. արևմտյան մասը Քարուտ Կիլիկիան է, հյուսիս-արևմտյանը՝ Լեռնային Կիլիկիան, իսկ հարավ-արևելյանը՝ Դաշտային Կիլիկիան:
3. Կիլիկիայի հայկական պետության համար մեծ դեր ուներ նաև ռազմական նավատորմը, որի համար կառուցված հատուկ ամրություններից հայտնի էին Կոռիկոսի և Այասի ծովային բերդերը:
4. Խաչակիրներն առաջին անգամ հայտնվել են Կիլիկիայում Լևոն I իշխանի հոր՝ Կոստանդին I-ի կառավարման շրջանում:
5. Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II–ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պապեռոն քաղաքում:
6. Հայերը X դարի վերջերին կազմում էին Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Գտե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր սխալ բացատրությունները ներկայացնող տարբերակը:**

ա. Այն մարմինը, որին Մ. Սարաֆյանը ներկայացրեց Հայաստանի ազատագրության իր կազմած ծրագիրը, կոչվում էր Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա:
բ. Թորգոմի գլխավորությամբ 1903 թ. ամռանը Սասունին օգնության հասած ձիավոր խումբը կոչվում էր «Փոթորիկ»:
գ. Այն մարմինը, որը Արամ Մանուկյանին Թիֆլիսից Երևան էր գործուղել և նրան օժտել արտակարգ լիազորություններով, կոչվում էր Հայոց ազգային խորհուրդ:
դ. Կովկասյան ճակատում 1918 թ. գարնանը կռվող թուրքական զորամիավորումը հայտնի էր «Կարին» անունով:
ե. Միջագետքի ճակատում 1918 թ. թուրքերի դեմ կռված հայկական զորամիավորը կոչվում էր Արևելյան (Հայկական) լեգեոն:
զ. Հայկական չորս կամավորական ջոկատների միավորումից 1915 թ. գարնանը ստեղծված զորամիավորը հայտնի է «Արարատյան գունդ» անունով:
է. Հայկական կամավորական ութ ջոկատներից 1916 թ. վերակազմակերպված վեց զորամիավորները կոչվում էին հայկական հրաձգային գումարտակներ:

1) բ, զ, է
2) ա, գ, զ
3) բ, դ, ե
4) ա, դ, է

47 **Գտե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր սխալ բացատրությունները ներկայացնող տարբերակը:**

ա. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
բ. Մենուան հարկատու դարձրեց Մելիդի թագավորությունը, որը հետագայում կոչվել է Մանա թագավորություն:
գ. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես Ի–ի ստեղծած չորս միավորները կոչվում էին զորավարություններ:
դ. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:
ե. Արգիշտի Ի–ի զորքերը հաղթարշավով հասել են Ալիշտու, այսինքն՝ Ալաշկերտի հովիտ:
զ. Արարատյան համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:
է. Զրադաշտականությունը իր բնույթով միաստվածային կրոն էր:

1) ա, դ, է
2) բ, ե, է
3) ա, բ, է
4) գ, ե, զ

48 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

ա. Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումների անցկացումը 1965 թվականին հետևանք էր հայության ազգային ինքնագիտակցության զարթոնքի։
բ. Նէպի սկզբնական շրջանում շուկայական հարաբերությունների աշխուժացման հետևանքը դրամական հարկաձևը բնամթերայինով փոխարինելն էր։
գ. Խորհրդային Հայաստանում բնակչության կենսամակարդակի աճի հետևանքը սփյուռքահայության մեծ հայրենադարձությունն էր։
դ. Հայաստանում ազգային ինքնագիտակցության զարթոնքի պատճառը ԽՍՀՄ–ում ստալինիզմի վերացման գործընթացն էր։
ե. Խորհրդային Հայաստանում հայրենադարձության հետևանքը ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակի վատթարացումն էր։
զ. Հայաստանում այլախոհական կազմակերպությունների հանդես գալը պայմանավորված էր նաև կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարով։
է. Ստալինի անձի պաշտամունքի ձևավորման հետևանքը ԽՍՀՄ–ի հաջողություններում և հաղթանակներում ժողովուրդների դերի գերագնահատումն էր։

1) բ, դ, ե
2) ա, դ, է
3) գ, ե, զ
4) ա, դ, զ

49 **Թվարկվածներից որո՞նք են Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանքներ։**

ա. Հռոմեական կայսրությունը հաստատվեց Վիրքում և Աղվանքում։
բ. Փոքր Հայքը վերադարձվեց Հայաստանին։
գ. Տրդատ III–ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր։
դ. Տրդատ III–ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ։
ե. Ներսեհը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը։
զ. Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը։
է. Պարսից արքա Շապուհ I–ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը։

1) գ, դ, ե
2) ա, բ, է
3) դ, ե, զ
4) ա, գ, զ

50 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Գյուլիստանի պայմանագրի կնքումը
բ. Երևանի գրավումը ռուսական զորքի կողմից
գ. բարենորոգումների հրովարտակի (թանզիմաթ) հրապարակումը
դ. Օշականի ճակատամարտը
ե. Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը
զ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
է. Շամքորի ճակատամարտը
ը. ռուսական զորքի կողմից Սարդարապատի գրավումը
թ. հայազգի գեներալ Վ. Բեհբութովի նշանակվելը Հայկական մարզի կառավարչի պաշտոնում
ժ. Թավրիզի գրավումը ռուսական զորքի կողմից

1) բ
2) ժ
3) զ
4) ը

51 **Տիգրան Մեծի նվաճումներից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Կապադովկիայի գրավումը
բ. Պտղոմայիս քաղաքի գրավումը
գ. Ասորիքի գրավումը
դ. Ծոփքի միացումը Մեծ Հայքին
ե. Մարաստանի գրավումը
զ. պարթևների թագավորանիստ Էկբատանի գրավումը
է. Օսրոյենեի, Ադիաբենեի և Միգդոնիայի միացումը Հայոց թագավորությանը
ը. Վիրքի և Աղվանքի հպատակեցումը
թ. Հրեաստանի և Նաբաթեա թագավորության կողմից Հայոց արքայի գերիշխանության ընդունումը
ժ. Կորդուքի միացումը Մեծ Հայքին

1) է
2) գ
3) զ
4) ե

52 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

ա. Լենինականի հէկի գործարկումը
բ. Ստալինի 50–ամյակի նշումը, անձի պաշտամունքի բացահայտ դառնալը
գ. Երևանի կաուչուկի գործարանի շահագործման հանձնվելը
դ. գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը
ե. Խորեն Մուրադբեգյանի ընտրվելը Ամենայն հայոց կաթողիկոս
զ. Հայաստանի կերպարվեստի թանգարանի կազմակերպումը
է. Սովի պատճառով և ապրուստի միջոցներ հայթայթելու համար Սևանա լճի ավազանից հազարավոր ընտանիքների հեռանալը
ը. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում
թ. Հայաստանում գավառային բաժանման վերացումը և շրջանների ստեղծումը
ժ. Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության ստեղծումը

1) դ, ժ, ա, ը, ե, թ, բ, է, գ, զ
2) ժ, ը, դ, ա, բ, է, ե, թ, զ, գ
3) դ, ժ, ը, ե, ա, բ, է, գ, զ, թ
4) ժ, դ, ը, ա, բ, թ, ե, է, զ, գ

53 **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

Պաշտոն

1. ՀՍԽՀ արտակարգ կոմիսար Ղարաբաղում
2. Կապանում և Սիսիանում տեղի ունեցած հակախորհրդային ապստամբության ղեկավար
3. Փարիզի վեհաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար
4. ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ
5. ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ
6. Հայաստանի խորհրդի նախագահ
7. ՀՀ զինվորական նախարար

Անուն

ա. Թևան (Ստեփանյան)
բ. Սահակ Տեր-Գաբրիելյան
գ. Ասքանազ Մռավյան
դ. Ռուբեն Տեր-Մինասյան
ե. Լևոն Կարախան
զ. Պողոս Տեր-Դավթյան
է. Ավետիք Սահակյան
ը. Ավետիս Ահարոնյան

1) 1–զ, 2–ա, 3–ը, 4–ե, 5–բ, 6–է, 7-դ
2) 1–զ, 2–զ, 3–ը, 4–բ, 5–ե, 6–է, 7-դ
3) 1–բ, 2–դ, 3–է, 4–գ, 5–ե, 6–ը, 7-զ
4) 1–զ, 2–զ, 3–ը, 4–դ, 5–բ, 6–է, 7-ե

54 **Ընտրե՛ք բոլոր ճիշտ պնդումները ներկայացնող տարբերակը։**

ա. Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում Ք. ա. VII դարի առաջին կեսին վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը։
բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր։
գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը։
դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I–ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին։
ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը։
զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ։
է. Ք. ա. 580–570–ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի։

1) գ, դ, զ
2) ա, զ, է
3) բ, դ, ե
4) ա, բ, է

55 **Գտե՛ք բոլոր ճիշտ փաստարկները ներկայացնող տարբերակը։**

ա. Հովհաննես Թութունջի վարդապետը մահտեսի Շահմուրատի հետ, հայկական պատվիրակության կազմում, 1683 թ. ժամանել էր Փարիզ։
բ. Արցախի ազատագրական ուժերը 1723 թ. թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ։
գ. Եղվարդ գյուղի մոտ 1736 թ. հունիսին տեղի ունեցած ճակատամարտում Նադիրի բանակը ծանր պարտության մատնեց օսմանցիների զորքերին։
դ. Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի և ուրիշների գլխավորությամբ Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը տևել է երեք ամսից ավելի, իսկ այդ ընթացքում թուրքական բանակը կորցրել է ավելի քան 20 հազար զինվոր։
ե. Հ. Վարդովյանի գլխավորությամբ Կ. Պոլսում 1863 թ. ստեղծվել է հայկական արհեստավարժ թատրոն։
զ. Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Ռուսաստանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը։
է. Հայտնի պատմաբան Լեոն պատմագրության մեջ պահպանողական ուղղության հետևորդ էր և գրել է Հայոց պատմության բոլոր շրջանների և հիմնախնդիրների մասին։

1) ա, դ, զ
2) բ, դ, ե
3) ա, գ, զ
4) բ, գ, է

56 **Ընտրել այն պնդումները, որոնք արտացոլում են Լևոն II–ի ներքին ու արտաքին քաղաքականության արդյունքները։**

ա. Լիակատար հաջողությամբ պսակվեց Անտիոքի համար պայքարը, այն միացվեց Կիլիկյան Հայաստանին։
բ. Կարգավորվեց երկրի դրամական շրջանառությունը։
գ. Նա կարևոր հաղթանակներ տարավ մամլուքների նկատմամբ։
դ. Հայոց պետությունը ստեղծեց ռազմական և առևտրական նավատորմ։
ե. 1216 թ. նա գրավեց Անտիոք քաղաքը և իշխանությունը հանձնեց իր ազգական Ռայմոնդ–Ռուբենին։
զ. Վերաշինվեցին և բարեկարգվեցին Այաս և Կոռիկոս նավահանգիստները։
է. Նա այդպես էլ չկարողացավ թագավորական տիրույթներին միացնել Լամբրոն բերդը։
ը. Թագավորը արտոնություններից զրկեց Վենետիկի և Ջենովայի վաճառականներին։

1) ա, բ, գ, ե
2) բ, դ, ե, զ
3) դ, է, ը
4) բ, գ, զ

57 **Հայոց աստվածների անունները համապատասխանեցրե՛ք հունական աստվածների անուններին՝ հելլենիստական դարաշրջանում ընդունված համադրությամբ և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

1. Ափրոդիտե	ա. Արեգ–Միհր
2. Արտեմիս	բ. Արամազդ
3. Հերակլես	գ. Աստղիկ
4. Հելիոս	դ. Անահիտ
5. Զևս	ե. Նանե
6. Ապոլոն	զ. Վահագն
	է. Տիր

1) 1–գ, 2–դ, 3–է, 4–ա, 5–բ, 6–զ
2) 1–գ, 2–ե, 3–զ, 4–ա, 5–է, 6–բ
3) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ա, 5–բ, 6–է
4) 1–դ, 2–ե, 3–ա, 4–զ, 5–բ, 6–է

58 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները։**

1. Հայաստանում 1966 թ. ապրիլի 24–ին ստեղծված նոր գաղտնի կազմակերպությունը կոչվում էր «Անկախ միացյալ կուսակցություն»:
2. 1989 թ. օգոստոսի 16–ին Ստեփանակերտում տեղի ունեցած՝ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի կողմից կազմված 80 հոգանոց մարմինը կոչվում էր Ազգային խորհուրդ:
3. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. հունվարին ԼՂԻՄ–ում ստեղծված կառավարման մարմինը կոչվում էր Ադրբեջանի Հանրապետության կոմիտե:
4. Երկրորդ աշխարհամարտից հետո սփյուռքահայության ներգաղթը Հայաստան կազմակերպելու համար հանրապետության կառավարությանն առընթեր կազմակերպված մարմինը կոչվում էր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:
5. ԱՄՆ–ում դաշնակցության ստեղծած Հայկական ազգային կոմիտեն նաև կոչվում է Հայ դատի հանձնախումբ:
6. Օրենսդիր բարձրագույն մարմինը, որը 1988 թ. հունիսի 15–ին քննարկեց ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20–ի որոշումը, կոչվում էր ՀԽՍՀ Ազգային ժողով:
7. Հայաստանի Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունած փաստաթուղթը կոչվում էր «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»:
8. Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին իրավապաշտպաններ:
9. Խորհրդային Հայաստանում ձևավորված գաղտնի կազմակերպություններից «Հայկական երիտասարդական միություն»–ը հայտնի էր «Յոթ հայրենասերներ» անունով:

59 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1. Հայաստանում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր մարաջախտ:
2. Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր սպասալար:
3. Պատմական Արցախ աշխարհում XI դ. ձևավորված մահմեդական իշխանությունը հայտնի է Գանձակի աթաբեկություն անունով:
4. Կիլիկիայում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր ասպետ:
5. Վրաց արքունիքում սպարապետին կոչում էին ամիրսպասալար:
6. Վրաստանում թագաժառանգի խնամակալության պաշտոնը կոչվում էր մարդպետություն:
7. Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմինը կոչվում էր արքունիք:

60 **Պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են սխալ։**

1. Արճեշի ճակատամարտում հայ ապստամբներն ունեցան զգալի կորուստներ. զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և բազում այլ տոհմերից նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ երեք հազար հոգի։
2. Սահակ Պարթև կաթողիկոսի ջանքերի շնորհիվ Շապուհ V–ը Կամսարականներին ու Ամատունիներին վերադարձրեց իրենց տոհմական տիրույթները։
3. Վարդանանց պատերազմի շնորհիվ հայոց երկիրը պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը։
4. Մի խումբ հայ նախարարների և փառամոլ երեց Սուրմակի բողոքի ու չարախոսության արդյունքում Արտաշեսը զրկվեց գահից, իսկ Սահակ Պարթևը՝ կաթողիկոսությունից։
5. Հայ–վրացական համագործակցության շնորհիվ սելջուկներից ազատագրվեցին Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածները։
6. Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառներից էին զարգացած միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնախույս ձգտումները։
7. VII դարի կեսերի արաբական նվաճողական պատերազմների հետևանքներից էր Սասանյան տերության և Բյուզանդիայի կործանումը։
8. Կիլիկիան վերանվաճելու համար Հովհաննես Կոմնենոս կայսրը Ռուբինյան իշխանության դեմ 1137 թ. սկսեց պատերազմ։

61 **Թվարկվածներից որո՞նք Փետրվարյան ապստամբության արդյունքներից չեն։**

1. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ։
2. Ապստամբության ղեկավարները ենթարկվեցին առավելագույն պատժի՝ գնդակահարության։
3. Հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակեցին։
4. Հայկական բանակի աքսորից ազատված սպաներին թույլ չտրվեց վերադառնալ Հայաստան։
5. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում։
6. Շարունակվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։
7. Խորհրդային իշխանությունը ստիպված էր առավել զգուշորեն գործել։

62 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

1. ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը 1945 թ. մայիսի 28–ին դիմել է Ստալինին, Ռուզվելտին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել հայ ժողովրդին հուզող հարցը լուծելու համար։
2. Ամբողջ Անդրկովկասից 1949 թվականին աքսորվել է մոտ 15 500 հայ՝ հիմնականում Ալթայի երկրամաս։
3. Մոսկվայի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացավ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլյայի հրամանատար Սերգեյ Բուռնազյանը։
4. Պատերազմի ժամանակ հայ զինվորականներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, իսկ ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատար։
5. ԽՄԿԿ կենտկոմի 1953 թ. հուլիսի 2-ին կայացած լիագումար նիստում ձերբակալվեց ներքին գործերի նախարար Լ. Բերիան և քննվեց նրա հանցավոր գործունեության մասին հարցը։
6. Հայրենական մեծ պատերազմի տարիներին ցուցաբերած սխրանքների համար ԽՍՀՄ հերոսի կոչում է շնորհվել 119 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների։
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության երկրորդ փոփոխությունները հաստատվել են հանրաքվեի միջոցով՝ ՀՀ նախագահական վեցերորդ ընտրություններից հետո։
8. Հայկական 409–րդ դիվիզիան կռվել է Ռումինիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Չեխոսլովակիայում, կազմացրվել է 1945 թ. հունիսի 2-ին Հունգարիայում։
9. Ստալինյան բռնաճնշումների զոհ են դարձել Կարմիր բանակի հայ զորահրամանատարներ Հայկ Բժշկյանցը, Գրիգոր Խախանյանը, Սուրեն Շահումյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը և ուրիշներ։

63 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները։**

1. Հայոց եկեղեցին պահպանել է Քրիստոսի մի բնության մասին դավանաբանությունը՝ հենվելով տիեզերական առաջին չորս ժողովների վճիռների վրա։
2. Արևելյան Հայաստանում Վարդ Պատրիկից հետո կառավարել են պարսիկ մարզպաններ, այնուհետև՝ հայոց իշխան Մժեժ Գնունին։
3. Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի խաղաղ կառավարման տարիներին Հայաստանի կախումը Արաբական խալիֆայությունից ձևական բնույթ ուներ, իսկ վճարվող հարկը չնչին էր՝ 500 դահեկան։
4. Պարսից արքա Խոսրով I–ը իր երկրում սկսված ապստամբությունը ճնշելու նպատակով ռազմական օգնություն էր խնդրել Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսից։
5. «Աշխարհացոյց»-ը հին և վաղմիջնադարյան ժամանակներում հայտնի աշխարհի աշխարհագրական նկարագրությունը պարունակող աշխատություն է և հիմնված է Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկ»-ի մեթոդաբանության վրա։
6. Դվինի 554 թ. ժողովում ուղենշվել է Հայոց եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը։
7. Արևմտյան Հայաստանի նախկին նահանգներից և հայկական հինգ ինքնուրույն իշխանություններից 536 թ. օրենքով ստեղծված Երրորդ Հայք նահանգի կենտրոնը Մելիտինեն էր։
8. Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ են դրվել նաև բյուզանդական օրենքները՝ ասիզներ անվանումով։

64 **Ընտրե՛ք սխալ պնդումները։**

1. Աղբյուր Սերոբը զգալի աշխատանք է տարել հայ–քրդական և հայ–ասորական դաշինք ստեղծելու ուղղությամբ։
2. Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում։
3. 1890–ական թթ. կեսերին հայդուկապետերի մեծ մասն արդեն հնչակյան էր, իսկ միավորված ջոկատները գլխավորապես գործում էին Հնչակյան կուսակցության հովանու ներքո։
4. Արաբոն սկզբում հանդես է եկել իբրև անհատ վրիժառու և 1885 թ. «որպես քուրդ» զինված հարձակումներ գործել թուրքական հարկահավաքների վրա։
5. Աբդուլ Համիդ II–ը Բեռլինի վեհաժողովի 61–րդ հոդվածի պահանջները կատարելով էր փորձում լուծել Հայկական հարցը։
6. Հրայր Դժոխքը հեղինակել է հայդուկային պայքարի իսկական դասագիրք՝ «Մարտական հրահանգներ» հայտնի կանոնագիրքը։
7. Ֆիդայական շարժման հանդես գալն Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր։

65 **Գտե՛ք այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը։**

1. Հայոց կաթողիկոսական աթոռի փոխադրումը Հռոմկլա
2. Սիսի դառնալը մայրաքաղաք
3. Ռուբեն III-ի կառավարման ավարտը
4. Միրիոկեֆալոնի ճակատամարտը
5. Սարգիս Զաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը
6. Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
7. Թամար թագուհու կառավարման ավարտը
8. Սալահ ադ Դինի կառավարման ավարտը
9. Լևոն II–ի և Բոհեմունդ III-ի միջև հաշտության պայմանագրի կնքումը Սիսում

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
2. ԼՂԻՄ-ում Հատուկ կառավարման կոմիտեի վերացումը
3. «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը Գետաշենում
4. ՀՀՇ առաջին համագումարի բացումը
5. երեք պետությունների ղեկավարների կողմից Բելովեժյան արգելանոց-անտառում ԽՍՀՄ-ի վերացման և ԱՊՀ-ի ստեղծման մասին հայտարարելը
6. «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
7. Զորի Բալայանի կողմից հացադուլի հայտարարումը Մոսկվայում և Վիկտոր Համբարձումյանի ու Սոս Սարգսյանի միանալը նրան

67 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Արտաշատի ավերումը Կորբուլոնի կողմից
2. Արշակ I-ի գահակալման սկիզբը
3. Տիգրան VI–ի գահընկեց լինելը
4. Տարոն գավառում հայ ազնվականի՝ Կորբուլոնին սպանելու փորձը
5. Հռադամիզդի փախուստը Արտաշատից կնոջ հետ
6. փոքրաթիվ զորաջոկատով Տրդատի հեռանալը Ատրպատական եղբոր՝ Բակուրի մոտ
7. Ներոն կայսեր գահակալման սկիզբը

68 **Հեղինակների անունները համապատասխանեցրե՛ք մեջբերված խոսքերին:**

Ա. «Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը»:

Բ. «… եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:

Գ. «…եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:

Դ. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

Ե. «Ո՞ւր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն»:

Զ. «…հնուց հայերեն գիր է եղել», ինչը «վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գտավ Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով… Հայկազուն թագավորների» անուններով:

Է. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար»:

1. Ասողիկ
2. Փավստոս Բուզանդ
3. Եղիշե
4. Դավիթ Անհաղթ
5. Մովսես Կաղանկատվացի
6. Կորյուն
7. Վարդան Արևելցի
8. Ղևոնդ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Ա. հայկական առաջին մշտական թատերական խմբի ղեկավարը
Բ. նշանավոր արևելագետ
Գ. ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հայրը
Դ. էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրը
Ե. հայ ազգային բնանկարի հիմնադիրը
Զ. ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրը
Է. արևելահայ երգահանային դպրոցի հիմնադիրը

1. Զակոմո Չամչյան
2. Պետրոս Մաղաքյան
3. Գևորգ Բաշինջաղյան
4. Քրիստափոր Կարա-Մուրզա
5. Հովսեփ Օրբելի
6. Լևոն Օրբելի
7. Անդրեաս Արծրունի
8. Ալեքսանդր Սպենդիարյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. Հայաստանի նորահաստատ բոլշևիկյան վարչակարգը քաղաքական հետապնդումներ և բռնություններ է գործադրել միայն հայկական բանակի սպայակազմի և Առաջին հանրապետության կառավարության անդամների նկատմամբ:
2. Կովկասյան ճակատում 1918 թ. մայիսի սկզբի դրությամբ ռուսական զորքին փոխարինած հայկական զորքի թիվը հասնում էր 42-43 հազարի:
3. Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուց և անկախ հռչակելուց հետո երկրամասում հաստատված նոր կառավարությունը գլխավորում էր Գեգեչկորին:
4. ՀՍԽՀ կառավարությունը 1921 թ. հունիսի 13–ին պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումն ընդունելու հերթական կոչն է ուղղել Արցախի կառավարությանը՝ նշելով, որ երկրամասը լինելու է Հայաստանի կազմում:
5. Հայաստանի առաջին հանրապետության համամասնական ընտրակարգով ընտրված խորհրդարանում կուսակցական խմբակցություն են ունեցել միայն ՀՅԴ–ն և էսէռները:
6. Բոլոր կուսակցությունները, այդ թվում՝ բոլշևիկները, ազգի և պետության համար ճակատագրական ու վճռական պահերին թիկունք էին կանգնում Հայաստանի առաջին հանրապետության կառավարությանը: